ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՇՁԲ-20-10/1-1

ք.Երևան 04 .05.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն.Յոլչյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աբակ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Սարգսյանի, ով գործում է «Աբակ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **գերեզմանատների կառուցման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **20.12.2020թ.**:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 **Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:**

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ

վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի **առավելագույն** գինը կազմում է **40 000 000 (քառասուն միլիոն)** ՀՀ դրամ, որից **6 666 666.67(վեց միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն**: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5.4 **Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են** հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԱxՔ, որտեղ՝**

1) ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի աշխատանքների կատարման դիմաց վճարվող գումարն է.

2) ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է, որը կազմում է 8899440 ՀՀ դրամ.

3) ՆԳ-ն աշխատանքի կատարման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է, **որը կազմում է 9964033 ՀՀ դրամ.**

4) Ա-ն կատարված աշխատանքի առավելագույն միավորի գինն է.

5) Ք-ն կատարված աշխատանքի քանակն է.

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն

պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Աբակ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք.Երևան, Սիլիկյան թաղամաս, 10/87
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» Շահումյան մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 163028028518
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01222825
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված թիվ 1
ԳՀԱՇՁԲ-20-10/1-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/հ	Հաստատված ծախսային ծրագրի անվանատողը	Հիմնավորում	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Գինը. ներառյալ վերադիր ծախսեր, շահույթ,
1	2		3	4	6
	Գերեզմանատների կառուցում CPV կոդ՝ 45211273/2	***1.Հողային***			
1		Կ1-961	Գրունտի մշակում ձեռքով խրամուղիների՝ մինչև 2մ խորությամբ, առանց ամրակապման, թեքություններով, և փոսերի փորում մինչև 1,5մ խորությամբ, 3 կարգ գրունտներում	մ³	2.281
2		Կ1-962	Գրունտի մշակում ձեռքով խրամուղիների՝ մինչև 2մ խորությամբ, առանց ամրակապման, թեքություններով, և փոսերի փորում մինչև 1,5մ խորությամբ, 4 կարգ գրունտներում	մ³	4.023
		2.Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ			
3		Կ27-33	Ասֆալտբետոնե ծածկույթների քանդում	100մ³	548.39
4		Կ27-124 կիրառ q_w=0; $q_մ$=0,237	Ասֆալտբետոնե ծածկույթների ակոսահատում	100մ	77.56
5		Կ27-31	Խճային ծածկույթների քանդում	100մ³	69.86
6		Կ27-32	Հանքաձյութով տոգորված խճային ծածկույթների քանդում	100մ³	93.24
7		Կ27-34	Ցեմենտ-բետոնե ծածկույթների քանդում	100մ³	323.67
8		Կ27-35	Մայթերի մինչև 4սմ հաստ. ասֆալտբետոնե ծածկույթների քանդում	100մ²	8.54
9		Կ46-76	Խամքարե հիմքերի քանդում	մ³	16.30
10		Կ46-77	Բետոնե հիմքերի քանդում	մ³	60.28
11		Կ46-78	Ե/բետոնե հիմքերի քանդում	մ³	104.14
12		Կ46-80	Մանրաչափ բլոկներից պատերի քանդում	մ³	11.23
13		Կ46-100	Բետոնե հատակների և պատերի քանդում	մ³	17.04
14		Կ27-36	Բետոնե հիմնատակով եզրաքարերի քանդում	100մ	125.24
15		Կ46-131	Համատարած հիմնատակի վրա տեղադրված աստիճանների քանդում	100մ	180.47
16		Կ46-132 q=0,5 կիրառ	Հատակների և պատերի երեսապատված սալիկների քանդում	մ²	2.89
17		շուկա	Տապանաքարի, հուշաքարի, նկարաքարի, պատվանդանի և տումբաների ապամոնտաժում /ներառյալ մինչև 10մ ձեռքով տեղափոխելը/	մ²	17.65
18		23-77 գն.3	Ավելացած գրունտների և ապամոնտաժված նյութերի կուտակում, բարձում մեխանիզմով ինքնաթափ մեքենաները և տեղափոխում աղբատեղի, մինչև 1կմ	տն	5.15
19		23-77 23-226 գն.3	Ավելացած գրունտների և ապամոնտաժված նյութերի կուտակում, բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաները և տեղափոխում աղբատեղի, մինչև 1կմ	տն	3.95

	կն.3	Ավելացնել ցուցիչ 1կմ /1կմից ... ավելի դեպքում հաշվել որպես 2կմ/ տեղափոխման համար միավորի արժեքը x հեռավորության երկարության հետ ... 0.05, որտեղ n-ը հավաքատեղի բարձման տեղից մինչև թափոնատեղը ընկած տարածության երկարությունն է կմ-ով/	տն	0.20
	3.Հիմքերի և պատերի բետոնացման աշխատանքներ			
	3.1 Գրունտի խտացում և նախապատրաստական շերտեր			
21	Կ11-2	Գրունտի խտացում խճով /գրունտի համահարթեցում, ջրցանում; խճի փռում; համահարթեցում; ներսեղմում; ծախսը՝ խիճ 40-70մմ չափաբաժնի- 4,08խմ/	100մ²	42.72
22	Կ11-3	Նախապատրաստական շերտի պատրաստում ավազից /գրունտի համահարթեցում, ջրցանում; ավազի փռում; հարթեցում; խտացում; ծախսը՝ ավազ- 1,12խմ/	մ³	8.08
23	Կ11-5	Նախապատրաստական շերտի պատրաստում գլաքարե խճից /գրունտի համահարթեցում, ջրցանում; գլաքարե ջարդված խճի փռում; հարթեցում; խտացում; ծախսը՝ խիճ 5-10մմ չափաբաժնի- 1,25խմ/	մ³	11.33
24	Կ11-6	Նախապատրաստական շերտի պատրաստում խճե խառնուրդով /գրունտի համահարթեցում, ջրցանում; մանրախճի և քարի փշրանքի փռում խճի վրա և խտացում; ծախսը՝ խիճ 20-40մմ չափաբաժնի - 0,97խմ, մանրախիճ -0,09խմ; քարե փշրանք-0,18խմ/	մ³	17.24
25	Կ11-11	Նախապատրաստական շերտի պատրաստում Վ7,5 դասի բետոնից առանց բետոնի արժեքի /խտացում; ծախսը՝ ծանր բետոն -1,02խմ/	մ³	4.61
	3.2 Հիմքերի և			
26	Կ6-20	Բետոնե ժապավենային հիմքերի իրականացում առանց բետոնի արժեքի /խտացում; բետոն 1,02խմ; ծախսը՝ փայտ 0,0039խմ; կաղապարամած 0,803քմ/	մ³	13.31
27	Կ6-21	Խամքարաբետոնե ժապավենային հիմքերի իրականացում առանց բետոնի արժեքի /ծախսը՝ բետոն 0,71խմ; փայտ 0,0101խմ; խամքար 0,44խմ; կաղապարամած 0,918քմ/	մ³	19.38
28	Կ6-15	Բետոնե հիմնային տափակ սալերի իրականացում առանց բետոնի արժեքի /խտացում; բետոն 1,02խմ; ծախսը՝ փայտ 0,008խմ; կաղապարամած 0,0754քմ/	մ³	5.23
29	Կ6-128	Բետոնե եզրապատերի իրականացում առանց բետոնի արժեքի /խտացում; բետոն 1,02խմ; ծախսը՝ հեղույս մանեկ 2,1կգ; փայտ 0,0399խմ; կաղապարամած 1,76քմ/	մ³	36.77
30	Կ6-90	Բետոնե հենապատերի իրականացում առանց բետոնի արժեքի /խտացում; բետոն 1,02խմ; ծախսը՝ հեղույս մանեկ 0,9կգ; փայտ 0,0165խմ; կաղապարամած 0,717քմ/	մ³	15.63
31	Կ6-91	Խամքարաբետոնե հենապատերի իրականացում առանց բետոնի արժեքի /բետոն 0,71խմ; ծախսը՝ հեղույս մանեկ 0,9կգ; խամքար 0,44խմ; փայտ 0,0165խմ; կաղապարամած 0,717քմ/	մ³	20.54
	3.3.Բետոններ և			
	3.3.1 Պատրաստումը տեղում/արժեքը/			
32	Կ6-309	Ծանր Վ7,5 դասի բետոնի պատրաստում տեղում /ծախսը՝ խիճ 0,8խմ; ավազ 0,58խմ; ցեմենտ 214կգ; ջուր 0,21խմ/	մ³	30.07
33	Կ6-310	Ծանր Վ12,5 դասի բետոնի պատրաստում տեղում /ծախսը՝ խիճ 0,8խմ; ավազ 0,57խմ; ցեմենտ 235կգ; ջուր 0,21խմ/	մ³	31.60
34	Կ6-311	Ծանր Վ15 դասի բետոնի պատրաստում տեղում /ծախսը՝ խիճ 0,8խմ; ավազ 0,53խմ; ցեմենտ 286կգ; ջուր 0,21խմ/	մ³	35.27
35	Կ6-336	Ցեմենտային շաղախի Վ7,5 դասի պատրաստում տեղում /ծախսը՝ ավազ 1,21խմ; ցեմենտ 304կգ; ջուր 0,31խմ/	մ³	31.80
	3.4.Ամրանավորման աշխատանքներ			

[illegible]	ՀՆ Լժ6 : 5 գիրառ	Ամրանային պողպատից շինվածքների, ցանցերի պատրաստում և տեղադրում ժապավենային հիմքերի, հիմնային սալերի և պատերի կաղապարամածների մեջ՝ առանց ամրանի և ցանցի արժեքի	տ	60.31
4. Բարեկարգման աշխատանքներ				
37	Կ27-86 կիրառ	Բետոնե և բազալտե եզրաքարերի (մայթեզրերի) տեղադրում բետոնե Կ15 դասի հիմքի վրա: հողային արկղի պատրաստում հիմքի համար, բետոնե հիմքի իրականացում բետոնի խտացումով, կաղապարամածի տեղադրում և ապամոնտաժում, եզրաքարերի տեղադրում հարմարատաշումով, կարաների լցում գծամշակումով /ծախսը՝ եզրաքար 1գծմ, բետոն 0,04*-0,06խմ: ց/ա շաղախ 0,0006խմ, առանց բետոնի և եզրաքարերի (մայթեզրերի) արժեքի/	մ	1.74
38	16-11	Բազալտե եզրաքարերի և մայթեզրերի ուղղում /շրջակողերի քանդումով, բետոնե հիմնատակների համաուղղում, քարերի ուղղում նշագծով, շրջակողերի հետլիցք տոփանումով, կարաների լիցք ցեմենտային շաղախով, ծախս՝ 0,1խմ շաղախ/	մ	0.99
39	Կ27-114	Ցեմենտ-բետոնե ծածկույթների իրականացնում 20սմ հաստության, մանր մեխանիզացիայի միջոցներով, առանց բետոնի արժեքի /խտացում; բետոն 20,4խմ; ծախսը՝ կաղապարամած 1,17քմ; ավազ 4խմ/	100մ²	162.10
40	Կ27-115	Յուրաքանչյուր 1սմ շերտի հաստության փոփոխման համար ավելացնել կամ պակասացնել առանց բետոնի արժեքի /խտացում; բետոն 1,02խմ; ծախսը՝ կաղապարամած 0,059քմ/	100մ²	1.03
41	Կ27-173	Հիմնատակի իրականացնում բազալտե խճից 12սմ հաստ.; նյութերի ցրում և հարթեցում, գլդոնում և ջրում /ծախսը՝ խիճ չ-ք 40-70 14,44խմ; խիճ չ-ք 5-10 2,96խմ; ջուր 2խմ/	100մ²	184.15
42	Կ27-174	Յուրաքանչյուր 1սմ շերտի հաստության փոփոխման համար ավելացնել կամ պակասացնել /ծախսը՝ խիճ չ-ք 40-70 1,12խմ, խիճ չ-ք 5-10 0,23խմ/	100մ²	9.71
43	Կ27-175	Մայթերի իրականացնում բետոնե սալերից, կարաների լցումով ցեմենտե շաղախով առանց բետոնե սալերի արժեքի /ծախս՝ ց/ա շաղախ 0,05խմ/	100մ²	134.86
44	Կ27-176	Մայթերի իրականացնում բետոնե սալերից, կարաների լցումով ավազով /առանց բետոնե սալերի արժեքի, ծախս՝ ավազ 0,05խմ/	100մ²	112.07
45	իտ	Մայթի ձևավոր բետոնե սալիկ, երկրորդ շերտը մոխրագույն 6սմ հաստ. /արժեքը/	100մ²	642.62
46	իտ	Մայթի ձևավոր բետոնե սալիկ, երկրորդ շերտը գույնավոր 6սմ հաստ. /արժեքը/	100մ²	715.64
47	Կ11-221-2	Ծածկույթի պատրաստում հղկված բազալտե, տուֆե, անդեզիտե, ֆերզիտե, գրանիտե և մարմարե սալերով, 1քմ-ում 4 հատից ավելի /առանց բազալտե սալերի արժեքի/	մ²	7.63
48	Կ15-77 կիրառ	Պատերի, աստիճանների և աստիճանաճակատների երեսապատում բազալտե, տուֆե, անդեզիտե, ֆերզիտե, գրանիտե և մարմարե սալերով, խարսխավորումով կամ առանց խարսխավորմամբ /առանց սալերի արժեքի/	մ²	11.75
49	Կ7-733	Բետոնե աստիճանների տեղադրում, պատրաստի հիմնատակի վրա /առանց աստիճանի արժեքի/	մ	2.46
50	Կ7-734	Բազալտե աստիճանների տեղադրում, պատրաստի հիմնատակի վրա /առանց աստիճանի արժեքի/	մ	2.63
51	Կ7-734 կիրառ	Բազալտե ծածկասալերի տեղադրում /առանց ծածկասալի արժեքի/	մ	2.63
52	23-77 23-226 գն.3	Ապամոնտաժված նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի կուտակում, բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաները և տեղափոխում, մինչև 1կմ	տն	4.044
53	շուկա	Ամբարձիչ մեքենայի, կռունկի ծառայություն	ժամ	6.031
5. Ասֆալտբետոնե աշխատանքներ				
54	Կ27-19	Նախապատրաստական և հարթեցնող շերտերի իրականացնում ավազից /ծախսը՝ 1,1խմ ավազ; ներքնաշերտի համահարթեցում և տոփանում, ավազի ցրում-հարթեցում, գլդոնում և ջրում/	մ³	4.91

55	Կ27 20	Նախապատրաստական և հարթեցնող շերտերի իրականացում ավազ և ավազային խառնուրդից /ծախսը՝ միջ. 1,22խմ ավազա-կոպճային խառնուրդ ներքնաշերտի համահարթեցում և տոփանում, ավազա-կոպճային խառնուրդի ցրում հարթեցում, գլդոնում և ջրում/	մ³	8.83
56	Կ27-22-2	Նախապատրաստական և հարթեցնող շերտերի իրականացնում խարամե խիճ /ծախսը՝ 1,26խմ խարամե խիճ; ներքնաշերտի համահարթեցում և տոփանում, խարամի ցրում-հարթեցում, գլդոնում և ջրում/	մ³	5.64
57	Կ27-22-1	Նախապատրաստական և հարթեցնող շերտերի իրականացնում խիճ-ավազային խառնուրդով /ծախսը՝ միջ. 1,26խմ խիճ-ավազային խառնուրդ; ներքնաշերտի համահարթեցում և տոփանում, խիճա-ավազային խառնուրդի ցրում-հարթեցում, գլդոնում և ջրում/	մ³	11.32
58	Կ27-164	Ասֆալտբետոնե տաք խառնուրդներից մեկ շերտով ծածկույթի իրականացնում 4սմ հաստ., առանց ասֆալտբետոնի արժեքի (հիմնատակի մաքրում, ա/բ խառնուրդի փռում ասֆալտափոխիչներով, եզրերի կտրատումով, տոփանում գլդոնման համար անմատչելի տեղերում, գլդոնում, նմուշահատների արտահատում և տեղերի լցափակում) /ծախսը՝ ըստ ա/բետոնի տիպի և մակնիշի, խտացված վիճակում 9,11-9,74տն/	100մ²	24.86
59	Կ27-165	Յուրաքանչյուր 0,5սմ շերտի հաստության փոփոխման համար ավելացնել կամ պակասացնել առանց ասֆալտբետոնի արժեքի /ծախսը՝ ըստ ա/բետոնի տիպի և մակնիշի, խտացված վիճակում 1,14-1,21տն/	100մ²	0.01
60	Կ27-167	Մինչ ասֆալտ-բետոնի փռումը, տարվա խոնավ և ցուրտ ժամանակաշրջանում, բետոնե և ա/բետոնե հիմնատակի տաքացում և չորացում	100մ²	15.86
61	Կ27-169, Կ27-172	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծուլածո խառնուրդից ծածկույթի իրականացնում արահետներում և մայթերում, հաստ. 3սմ, առանց ա/բետոնի արժեքի(հիմնատակի մաքրում, կցվածքների քսում հանքաձյութով, ավազի լցում, ա/բետոնի խառնուրդի փռում և խտացում գլանիկով) /ծախսը՝ հանքաձյութ 0,06տ, ավազ 0,5խմ, ա/բետոնի ըստ տիպի և մակնիշի, խտացված վիճակում/	100մ²	43.65
62	Կ27-172	Յուրաքանչյուր 0,5սմ շերտի հաստության փոփոխման համար ավելացնել կամ պակասացնել առանց ասֆալտբետոնի արժեքի /ծախսը՝ ըստ ա/բետոնի տիպի և մակնիշի, խտացված վիճակում/	100մ²	3.73
63	Կ27-170, Կ27-171 Կ27-170-1 Կ27-171-1	Երկշերտ ծածկույթի ներքին կամ վերին շերտի իրականացում ա/բետոնե խառնուրդներով տեղական նշանակության ճանապարհներում և մայթերում, հաստ. ըստ տեղային պահանջի, առանց ասֆալտբետոնի արժեքի (հիմնատակի մաքրում, կցվածքների քսում հանքաձյութով, ա/բետոնի խառնուրդի փռում և խտացում գլդոնումով) /ծախսը՝ հանքաձյութ 0,06տ/	100մ²	40.71
64	Կ27-28, Կ27-28-1, Կ27-28-2	Հարթեցնող շերտի իրականացում ա/բետոնե խառնուրդներով ասֆալտափոխիչներով, առանց ասֆալտբետոնի արժեքի (հիմնատակի մաքրում, ա/բ խառնուրդի փռում ասֆալտափոխիչներով, եզրերի կտրատումով, տոփանում գլդոնման համար անմատչելի տեղերում, գլդոնում, նմուշահատների արտահատում և տեղերի լցափակում) /ծախսը՝ ա/բետոն՝ 1,0տ-1,01տ/	տ	2.46
65	Կ27-29, Կ27-29-1, Կ27-29-2	Հարթեցնող շերտի իրականացում ա/բետոնե խառնուրդներով առանց ասֆալտափոխիչների, առանց ասֆալտբետոնի արժեքի (հիմնատակի մաքրում, ա/բ խառնուրդի փռում, եզրերի կտրատումով, տոփանում գլդոնման համար անմատչելի տեղերում, գլդոնում, նմուշահատների արտահատում և տեղերի լցափակում) /ծախսը՝ ա/բետոն՝ 1,0տ-1,01տ/	տ	3.00
	6. Տապանաքարերի, հուշաքարերի, նկարաքարերի տեղադրման և ձեռքով տեղափոխման աշխատանքներ			
66	շուկա	Տապանաքարի, հուշաքարի, նկարաքարի, պատվանդանի և տումբաների տեղադրում ներառյալ մինչև 10մ ձեռքով տեղափոխելը /առանց պատրաստվածքի արժեքի/	մ²	20.97

[illegible]	շուկա	Ամեն լրացուցիչ 10 մ հեռքով տեղափոխելու համար ավելացնել միավորի արժեքը - հեռավորության երկարության հետ: մ [illegible] (n 10), որտեղ n-ը գերեզմանաքարերի իջեցման տեղից մինչև տեղադրման տեղը տարածության երկարությունն է մ-ով/	մ²	0 85
68	շուկա	Ծաղկամանի կամ խնկամանի տեղադրում /առանց արժեքի/	հատ	1 659
	Բազալտ			
69	Արմսթոուն ՔԸ	Բազալտե գերեզմանաքարի վրա նկարի դաջում, սովորական	հատ	24.22
70	Արմսթոուն ՔԸ	Բազալտե գերեզմանաքարի վրա նկարի դաջում, կեսով	հատ	48.44
71	Արմսթոուն ՔԸ	Բազալտե գերեզմանաքարի վրա նկարի դաջում, հասակով	հատ	72.65
72	Արմսթոուն ՔԸ	Բազալտե գերեզմանաքարի վրա տառագրում, անուն, հայրանուն, ազգանուն, ծննդյան և մահվան տարեթվեր	հատ	24.22
73	հաշվարկ	Բազալտե գերեզմանաքարի վրա հավելյալ մեկ տառի կամ նշանի համար /տառագրում/	հատ	0.61
74	Արմսթոուն ՔԸ	Բազալտե գերեզմանաքարի վրա նշանի/հավերժության, խաչի և այլ նմանատիպ/ դաջում կամ փորագրում, չափը ստանդարդ մինչև 14*14սմ	հատ	41.03
75	Արմսթոուն ՔԸ	Բազալտե տապանաքար /փայլեցված, չերևացող կողմը սղոցված, չափերը ըստ հավելված 1-ի/ (արժեքը, շինվածք)	մ²	108.91
76	Արմսթոուն ՔԸ	Բազալտե նկարաքար /փայլեցված, չափերը ըստ հավելված 1-ի/ (արժեքը, շինվածք)	մ²	147.47
77	Արմսթոուն ՔԸ	Բազալտե պատվանդան կամ տումբա /հղկված, չափերը ըստ հավելված 1-ի/ (արժեքը, շինվածք)	մ²	85.08
78	Արմսթոուն ՔԸ	Բազալտե ծաղկաման 18*18*40(h)սմ չափի (արժեքը, շինվածք)	հատ	22.69
79	Արմսթոուն ՔԸ	Բազալտե ծաղկաման 15*15*40(h)սմ չափի (արժեքը, շինվածք)	հատ	18.16
80	Արմսթոուն ՔԸ	Բազալտե խնկաման 20*20*25(h)սմ չափի (արժեքը, շինվածք)	հատ	17.02
	Լալվարի			
81	Սուրբ Լույս ԱԿ	Լալվարի գրանիտից գերեզմանաքարի վրա նկարի դաջում, սովորական	հատ	43.00
82	Սուրբ Լույս ԱԿ	Լալվարի գրանիտից գերեզմանաքարի վրա նկարի դաջում, կեսով	հատ	86.01
83	Սուրբ Լույս ԱԿ	Լալվարի գրանիտից գերեզմանաքարի վրա նկարի դաջում, հասակով	հատ	158.43
84	Սուրբ Լույս ԱԿ	Լալվարի գրանիտից գերեզմանաքարի վրա տառագրում, անուն, հայրանուն, ազգանուն, ծննդյան և մահվան տարեթվեր	հատ	43.00
85	հաշվարկ	Լալվարի գրանիտից գերեզմանաքարի վրա հավելյալ մեկ տառի կամ նշանի համար /տառագրում/	հատ	1.08
86	Սուրբ Լույս ԱԿ	Լալվարի գրանիտից գերեզմանաքարի վրա նշանի/հավերժության, խաչի և այլ նմանատիպ/ դաջում կամ փորագրում, չափը ստանդարդ մինչև 14*14սմ	հատ	36.21
87	Սուրբ Լույս ԱԿ	Լալվարի գրանիտից տապանաքար /փայլեցված, չերևացող կողմը սղոցված, չափերը ըստ հավելված 2-ի/ (արժեքը, շինվածք)	մ²	295.00
88	Սուրբ Լույս ԱԿ	Լալվարի գրանիտից նկարաքար, երկարությունը մինչև 160սմ ներառյալ /փայլեցված, չափերը ըստ հավելված 2-ի/ (արժեքը, շինվածք)	մ²	408.39
89	Սուրբ Լույս ԱԿ	Լալվարի գրանիտից նկարաքար, երկարությունը 161-180սմ /փայլեցված, չափերը ըստ հավելված 2-ի/ (արժեքը, շինվածք)	մ²	465.16
90	Սուրբ Լույս ԱԿ	Լալվարի գրանիտից պատվանդան կամ տումբա /հղկված, չափերը ըստ հավելված 2-ի/ (արժեքը, շինվածք)	մ²	254.57
91	Սուրբ Լույս ԱԿ	Լալվարի գրանիտից ծաղկաման 18*18*40(h)սմ չափի (արժեքը, շինվածք)	հատ	45.33

92	Սուրբ Լույս ԱԿ	Լալվարի [illegible]ից ծաղկաման 15[illegible]սմ չափի (արժեքը, շինվածք)	հատ	34.03
93	Սուրբ Լույս ԱԿ	Լալվարի գրանիտից խնկաման 20*20*25(h)սմ չափի (արժեքը, շինվածք)	հատ	34.03
	Փամբակի			
94	Սուրբ Լույս ԱԿ	Փամբակի գրանիտից գերեզմանաքարի վրա նկարի դաջում, սովորական	հատ	43.00
95	Սուրբ Լույս ԱԿ	Փամբակի գրանիտից գերեզմանաքարի վրա նկարի դաջում, կեսով	հատ	86.01
96	Սուրբ Լույս ԱԿ	Փամբակի գրանիտից գերեզմանաքարի վրա նկարի դաջում, հասակով	հատ	158.43
97	Սուրբ Լույս ԱԿ	Փամբակի գրանիտից գերեզմանաքարի վրա տառագրում, անուն, հայրանուն, ազգանուն, ծննդյան և մահվան տարեթվեր	հատ	43.00
98	հաշվարկ	Փամբակի գրանիտից գերեզմանաքարի վրա հավելյալ մեկ տառի կամ նշանի համար /տառագրում/	հատ	1.08
99	Սուրբ Լույս ԱԿ	Փամբակի գրանիտից գերեզմանաքարի վրա նշանի/հավերժության, խաչի և այլ նմանատիպ/ դաջում կամ փորագրում, չափը ստանդարդ մինչև 14*14սմ	հատ	36.21
100	Արմսթոուն ՔԸ	Փամբակի գրանիտից տապանաքար /փայլեցված, չերևացող կողմը սղոցված, չափերը ըստ հավելված 3-ի/ (արժեքը, շինվածք)	մ²	227.34
101	Արմսթոուն ՔԸ	Փամբակի գրանիտից նկարաքար, երկարությունը մինչև 160սմ ներառյալ /փայլեցված, չափերը ըստ հավելված 3-ի/ (արժեքը, շինվածք)	մ²	319.91
102	Սուրբ Լույս ԱԿ	Փամբակի գրանիտից նկարաքար, երկարությունը 161-180սմ /փայլեցված, չափերը ըստ հավելված 3-ի/ (արժեքը, շինվածք)	մ²	329.44
103	Արմսթոուն ՔԸ	Փամբակի գրանիտից պատվանդան կամ տումբա /հղկված, չափերը ըստ հավելված 1-ի/ (արժեքը, շինվածք)	մ²	170.16
104	Սուրբ Լույս ԱԿ	Փամբակի գրանիտից ծաղկաման 18*18*40(h)սմ չափի (արժեքը, շինվածք)	հատ	45.33
105	Սուրբ Լույս ԱԿ	Փամբակի գրանիտից ծաղկաման 15*15*40(h)սմ չափի (արժեքը, շինվածք)	հատ	34.03
106	Սուրբ Լույս ԱԿ	Փամբակի գրանիտից խնկաման 20*20*25(h)սմ չափի (արժեքը, շինվածք)	հատ	34.03
107	Կ11-5	Գերեզմանի տարածքում խճի լիցք առանց խճի արժեքի պոլիէթիլենային երկշերտ թաղանթի վրա	մ³	9.42
108	Կ13-262 կիրառ q=0,6	Բազալտե, անդեզիտե, ֆելզիտե մակերևույթների հղկում	մ²	3.122
109	Կ13-262 կիրառ q=0,3	Տուֆե մակերևույթների հղկում	մ²	1.564
	Ընդամենը՝			**8303.361**
	ԱԱՀ 20%			**1660.672**
	ԸՆԴԱՄԵՆԸ՝			**9964.033**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՑՈՒԼՀՅԱՆ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Աբակ» ՍՊԸ-ի տնօրեն

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

«ԱԲԱԿ» «ABAK» «АБАК» 01222825

Հ/հ	Մարզ	գործակից
Ն		***1.0000***
1	Երևան	1.0572
2	Արմավիր	1.0615
3	Արարատ	1.07
4	Արագածոտն	1.0679
5	Կոտայք	1.0657
6	Գեղարքունիք	1.0898
7	Վայոց Ձոր	1.0761
8	Լոռի	1.0893
9	Շիրակ	1.088
10	Սյունիք	1.129
11	Տավուշ	1.132

Ծանոթություն

Աշխատանքներն իրականացվելու են հանրապետության ողջ տարածքում, համաձայն հաստատված թերությունների ակտերի:

Վճարումները կիրականացվեն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04,05,2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետը:

Աշխատանքի բացակայության դեպքում դրանց արժեքը հաշվարկվում է ՀՀ կառավարության 23,06,11թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգով, կիրառելով 2019թ.-ի թիվ 08 տեղեկագրի վերահաշվարկի և ՀՀ կառավարության 04,05,2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետում բերված բանաձևով ստացված գործակիցը:

Նյութերի և պատրաստվածքների գները փոխհատուցվում են ըստ 2019թ.-ի թիվ 08 ինֆորմացիոն տեղեկագրի և/կամ/ 04.10.2016թ. ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ՝ «Հաշվարկային փաստաթուղթը և դրա կազմումը» հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերով՝ ըստ ՀՀ կառավարության 23,06,11թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգի, ՀՀ կառավարության 04,05,2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետում բերված բանաձևով ստացված գործակիցը:

Նյութերի, պատրաստվածքների վրա տրանսպորտային (նյութերի տեղափոխման) ծախսերի գործակիցները պետք է կիրառել համաձայն վերը նշված մարզերի գործակիցների՝ ըստ ՀՀ կառավարության 23,06,11թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգի:

** Կապալառուն աշխատանքները կատարում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Աբակ» ՍՊԸ-ի տնօրեն

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

2.IX.21.IX

Հավելված թիվ 2
ԳՀԱՇՁԲ-20-10/1-1 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ - ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Հ/հ	Աշխատանքի անվանումը	CPV	Գնման առավելագույն գինը, ՀՀ դրամ	Աշխատանքների կատարման վայրը (մարզը)	Գնման ժամանակացույց
1	Գերեզմանատների կառուցում	45211273/2	40,000,000	ՀՀ տարածքում	II-IV եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 20,12,2020թ.-ը, ԿՇ և ՀԲ վարչության հայտերի հիման վրա:

Աշխատանքներն իրականացվելու են հանրապետության ողջ տարածքում նախատեսված առավելագույն գնի սահմաններում, համաձայն հաստատված թերությունների ակտերի և գնման ժամանակացույց-օրացուցային գրաֆիկի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Աբակ» ՍՊԸ-ի տնօրեն

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ԳՀԱՇՁԲ-20-10/1-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	CPV	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211273/2	Գերեզմանատների կառուցում	5000000	30000000	30000000	30000000	40000000	40000000	40000000	40000000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով: :*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Աբպակ» ՍՊԸ-ի տնօրեն

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված թիվ 4
ԳՀԱՇՁԲ-20-10/1-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Կատարված աշխատանքների					
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
ԳՀԱՇՁԲ-20-10/1-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն